ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 21-ին Սրբոց Ղևոնդյանց քահանայից պոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ, որին մասնակցելու էին եկել Հայաստանի, Արցախի, ինչպես նաև Միացյալ Նահանգների և Դամասկոսի հայոց թեմերից Մայր Աթոռ ժամանած շուրջ 160 հոգևորականներ՝ թեմակալ առաջնորդներ, Սուրբ Էջմիածնի վանաբնակ միաբաններ և քահանա հայրեր:

Հավարտ սրբազան արարողությանց Վեհարանի հանդիսությանց դահլիճում, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, ընկալյալ ավանդույթի համաձայն, գումարվեց քահանաների հավաքը: Հավաքը բացվեց Տերունական աղոթքով: Այնուհետև կազմակերպիչ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը ներկայացրեց հավաքի օրակարգը: Ներկայացվեցին զեկուցումներ և ծավալվեցին քննարկումներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և թեմերի հոգևոր-քարոզչական, հովվական, վարչակազմակերպական և եկեղեցական կյանքի այլ բնագավառների վերաբերյալ: Հավաքի ընթացքում քահանա Հայրերն առիթ ունեցան նաև իրենց հետաքրքրող ու հուզող հարցերի մասին լուսաբանություններ ստանալ Նորին Սրբությունից և բարձրաստիճան եկեղեցականներից:

Ամփոփելով հավաքի արդյունքները՝ Վեհափառ Հայրապետը նշանակալի պոնի առիթով իր շնորհավորանքները և հայրական օրհնությունը հղեց հոգևորականաց դասին, ապա ողջամեց հավատարիմ մնալ Սրբոց Ղևոնդյանց քահանայից եկեղեցանվեր ու հայրենապաշտպան ոգուն՝ մշտապես առաջնորդվելով Եկեղեցու ու Հայրենիքի միասնության բարձր գաղափարականով: Նորին Սրբությունը կարևորությամբ շեշտեց նաև առկա մարտահրավերներին առջև Եկեղեցու քարոզչական առաքելությունն առավել համակարգված ու նպատակաուղղված դարձնելու անհրաժեշտությունը: Այնուհետև նվիրյալ ու գնահատելի ծառայության համար Նորին Սրբության կողմից պարգևաբաշխության արժանացան 12 քահանաներ, որոնց շնորհվեց լանջախաչ կրելու իրավունք:

Քահանայից հավաքի ավարտին հոգևորականաց դասը թափորով ուղղվեց դեպի Մայր Տաճար՝ մասնակցելու երեկոյան ժամերգությանը: Աղոթքի մատուցումից հետո քահանա Հայրերը վերադարձան իրենց համայնքները՝ նորոգված հավատով շարունակելու իրենց հոգևոր ծառայությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ